ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 05 » 11 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000107

Ձեռնարկողը՝ ***«ԳՐԻՆ Ս» ՍՊԸ***
ք. Երևան, 0047 գ. Հովսեփյան 12/1

Գործունեությունը՝ ***Արևասարի գաբրոների երևակման տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարզյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000107

<05> 11 2020թ.

Գեղարքունիքի մարզի Արևասարի գաբրոների երևակման տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«ԳՐԻՆ Ս» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ, Ծրագիր
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Շողակաթ համայնք

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 2)-րդ կետի ա. ենթակետի՝ Արևասարի գաբրոների երևակման տեղամասում երկրաբանական ուսումնասիրությունը դասակարգվում է որպես «գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Գեղարքունիքի մարզի Արևասարի գաբրոների երևակման *տեղամասում* «ԳՐԻՆ Ս» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ Շողակաթի համայնքի վարչական տարածքում, համայնքի ղեկավարի կողմից նախնական համաձայնությամբ ձեռք բերված հողատարածքում 2020-2022թթ. ժամանակահատվածում նախատեսում է իրականացնել գաբրոների երկրաբանահետախուզական աշխատանքներ, նպատակ ունենալով պարզաբանելու հանքային մարմնի պարամետրերը, որակական հատկանիշները՝ որպես երեսպատման և շինարարական քար, իսկ արտադրական թափոնները՝ որպես դեկորատիվ խիճ, կոպիճ և ավազ օգտագործելու համար:

Հանքերևակման տարածքը գտնվում է 1950-2000մ բացարձակ բարձրությունների վրա և զբաղեցնում է 6.0 հա ընդհանուր մակերեսով տարածք: Տարածքը գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով կապված է Շողակաթ համայնքի /Շորժա գյուղի/ հետ (1.8կմ), մարզկենտրոն Գավառ քաղաքի հետ (84 կմ), Երևանի հետ (89 կմ): Հայկական երկաթուղու Շողակաթ կայարանը ուսումնասիրվող տարածքից գտնվում է մոտ 50 մ հեռավորությա վրա, իսկ 80 մ հեռավորության վրա գտնվում է Սևան-Շորժա ճանապարհը: Ճանապարհի ձախակողմյան մասում գտնվում է դիտարկվող տարածքը, իսկ աջակողմյան մասում՝ Սևան ազգային պարկի սահմանն է:

Տարածքի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության - 40° 30′ 25" արևելյան երկայնության - 45° 15′ 10": Ուսումնասիրվող տարածքը սահմանափակվում է հետևյալ կոորդինատներով, որոնք ներկայացված են ARM WGS-84 համակարգով.

1.	y=8521138, x=4485857	5.	y=8521338, x=4485953
2.	y=8521098, x=4485955	6.	y=8521463, x=4485965
3.	y=8521154, x=4486128	7.	y=8521408, x=4485845
4.	y=8521253, x=4486083	8.	y=8521313, x=4485835

Ուսումնասիրվող տեղամասը բնութագրվում է բլրային տարածքով, որին բնորոշ է սակավաթեք ռելիեֆը: Տարածքում բացակայում են սողանքային մարմինները: Երևակման տարածքի հողերը ներկայացված են դարչնագույն կարբոնատային, խիստ քաքարոտ հողերով, որտեղ տարածված է լեռնային, տափաստանային բուսականությունը: Տրամադրվող հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ արոտավայր: Հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Ընկերությանը, քարքարոտ լինելու պատճառով չի օգտագործվում որպես արոտավայր /վերջինիս վերաբերյալ հավաստում է հայտում կցված Շողակաթ համայնքի ղեկավարի գրությունը/: Աշխատանքների իրականացման համար նոր ճանապարհների անցում չի նախատեսվում, վերանորոգվելու են բանկիչների կողմից օգտագործվող դաշտամիջյան ճանապարհները: Նախատեսվում է նորոգել 0.5 կմ երկարությամբ ճանապարհ:

Ընկերության կողմից նախատեսվող աշխատանքների արդյունքում, արդյունաբերական B կարգով պաշարների հաշվարկմամբ և տեխնիկատնտեսական հիմնավորմամբ կկազմվի երկրաբանական հաշվետվություն, որը կներկայացվի ընդերքի տրամադրման գործակալության քննարկմանն ու հաստատմանը: Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսված են իրականացնել հորատանցքերով /95գծ.մ/, մաքրվածքներով /70գծ.մ/, փորձնական բացահանքով /որի աշխատանքների ծավալները ներառում են՝ 12.5գծ.մ, 300մ^3 անցումով/ և նմուշարկման աշխատանքներով: Գաբրոների երեսապատման բլոկների ելքի տոկոսը պարզելու համար նախատեսվում է կատարել փորձնական արդյունահանում: Որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է հորատանցքերից, փորձնական բացահանքից, մաքրվածքներից կատարել նմուշարկում, իսկ խիստ հողմահարված, ճեղքավորված գաբրոների զանգվածը որպես խճի հումք պարզելու համար, նախատեսվում է համախառն նմուշարկում: Նմուշները «Անալիտիկ» ՓԲ ընկերության լաբորատորիայում կենթարկվեն քիմիական և ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների: Քիմիական անալիզի համար նախատեսվում է 3 նմուշ:

Տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ, իսկ ճառագայթահիգիենիկ հատկությունների պարզաբանման համար՝ ռադիոակտիվ դիտարկումներ:

Երկրաբանական ուսումնասիրության մեթոդիկան չի ենթադրում վտանգավոր նյութերի օգտագործում և աղտոտված արտահոսքերի առաջացում, քանի որ հորատումը կատարվելու է հորատող հաստոցով, կարծր համաձուլվածքային թագիկներով՝ դրանց հորատման լուծույթների կիրառման:

Աշխատանքների ընթացքում ժամանակավոր ազդեցություններ կրրսևորվեն մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա: Աշխատող ավտոտրանսպորտը և հորատման

հաստոցները կարող են դառնալ վնասակար գազերի և փոշու արտանետումների ժամանակավոր աղբյուր: Քիչ քանակով փոշեառաջացում կարող է դիտվել նաև փորձնական հանույթի բացահանքի սահմաններում:

Աշխատանքների իրականացման համար պահանջվող տեխնիկական ջուրը /որը նախատեսված է հորատման աշխատանքների և մակերևութային փորվածքների ժամանակ փոշեառաջացման կանխման համար/ կբերվի ջրի ցիստեռնով՝ Շողակաթ գյուղից, իսկ անձնակազմի կարիքների համար խմելու ջուրը կբերվի հատուկ տարողություններով: Աշխատողների կենցաղային կեղտաջրերի հեռացման համար կնախատեսվեն հատուկ տարողություններ:

Փորձնական բացահանքի մոտակայքով անցնում է հեղեղատար, որով կարող են հեռացվել տարածքի մակերևութային ջրային հոսքերը /անձրևաջրերը/: Փորձնական բացահանքի հարևանությամբ նախատեսվում է կառուցել պատնեշով պարզարան, որտեղ մինչև հեղեղատարին միանալը կնստեցվեն ապարներից առաջացող փոշու կախյալ մասնիկները, որից հետո միայն պարզված ջուրը կհեռացվի շրջակա տարածք, այսպիսով կանխելով հնարավոր արտահոսքերը շրջակա տարածքներ կամ Սևանա լիճ: Հարկ է նշել, որ նշված ապարները իներտ են, ոչ վտանգավոր և չեն ենթարկվում էական ֆիզիկական, քիմիական կամ այլ փոփոխությունների: Փորձնական բացահանքը, որտեղ կարող են կուտակվել ժամանակավոր պահվող ապարները, գտնվում է Սևանա լճից մոտ 600մ հեռավորության վրա:

Օգտագործվող մեքենաների և տեխնիկական միջոցների կայանման համար ընտրվելու է հոսքերից /հեղեղատար, Սևանա լիճ/ հնարավորինս հեռու տարածքներ:

Կիրառվող ավտոտրանսպորտը և սարքավորումները պարտադիր պետք է անցնեն տեխնիկական զննում, որպեսզի ապահովեն աշխատանքի սարքին վիճակը, ինչը թույլ կտա հսկել աղմուկի թույլատրելի մակարդակը և նվազեցնել շրջակա տարածքների համար անհանգստության աղբյուր հանդիսացող թրթռումները և աղմուկի ազդեցությունը:

Հողային ծածկույթը հնարավոր ազդեցությունից պահպանելու համար, նավթամթերքների պահման համար տարածքը պետք է կահավորվի մեկուսիչ շերտով իսկ օգտագործված յուղերն ու քսայուղերը հավաքվելու են առանձին տարրաներում՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման նպատակով լիցենզավորված ընկերությունների հանձնելու համար:

Քանի որ, հանքերևակման տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չի նախատեսվում, ուստի ջրային ռեսուրսների աղտոտում չի կանխատեսվում:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով հայտում նախատեսվում է փորձնական բացահանքի, մաքրվածքների փորման և հորատահարթակների կառուցման ժամանակ հանել մակաբացման ապարների հողախառն զանգվածով շերտը /0.3մ-ի չափով/, ժամանակավոր պահեստավորել, այնուհետև ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո այն օգտագործել խախտված լանդշաֆտի վերականգնման նպատակով: Հեռացվող հողաբուսական շերտի պահպանության նպատակով, լցակույտի մակերևույթի ու թեքությունների ամրացման համար նախատեսվում է իրականացնել խոտացանք: Քանի որ, հողային աշխատանքները

փոքրածավալ են և կարճաժամկետ, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո, անմիջապես ընկերության կողմից կիրականացվի լեռնատեխնիկական վերականգնում/ռեկուլտիվացիա: Ապարների հողախառն զանգվածով հողաբուսական շերտի ծավալը հաշվարկվել է 80,8մ^3, որից՝ հորատահարթակների 144մ^2 մակերեսում այն կկազմի 26.8 մ^3, մաքրվածքներում՝ 31.5մ^3, իսկ փորձնական բացահանքում՝ 22.5մ^3: Ռեկուլտիվացիայի աշխատանքները կատարվելու են ձեռքով, հողաբուսաշերտը կվերականգնվի 0.3մ խորության վրա: Նշված աշխատանքների իրականացման ընդհանուր ծախսերը հաշվարկվել են՝ 80.8մ^3 x 1500դր. = 121200 ՀՀ դրամ: Նշված աշխատանքներով կկանխարգելվեն բուսական աշխարհի վրա հնարավոր աղդեցությունները և տարածքները կվերականգնվեն իրենց նախկին կարգավիճակի: Ճանապարհների ռեկուլտիվացիա չի նախատեսվում, քանի որ ուսումնասիրության աշխատանքների համար օգտագործվելու է բանկիչների կողմից մշտապես օգտագործվող բանուկ դաշտամիջյան ճանապարհները:

Երևակման տարածքում, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում Ընկերության կողմից իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ աշխատանքային միջավայրի մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /մթնոլորտային օդ, լեռնատրանսպորտային սարքավորումներ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/, որոնց համար նախատեսված ծախսերը տարեկան կկազմեն 200.0 հազ.դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների կանխարգելման, կամ մեղմացման նպատակով նախատեսված միջոցառումները /ներառյալ՝ երևակման տարածքում աշխատանքային միջավայրի անվտանգության ապահովման և հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված միջոցառումները/ ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են տեղական ինքնակառավարման մարմինները, Գեղարքունիքի մարզպետարանը, ՀՀ ԳԱԱ «Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը» շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության նախարարությունները, «Սևան» ազգային պարկը, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության փուլում Շողակաթ համայնքում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումն արժանացել է հավանության: Քննարկման ընթացքում նախնական գնահատման հայտը ներկայացվել է համայնքի բնակիչներին, քննարկվել է ծրագրավորվող աշխատանքներում տեղացի բնակիչների ներգրավման և լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման հնարավորությունը: Ընկերության կողմից ներկայացվել է հետագայում, ուսումնասիրվող տարածքի հարևանությամբ Շողակաթ համայնքում հուշահամալիրի ստեղծման ծրագիր, համաձայն որի նախատեսվում է տեղադրել

Ուրարտական թագավորության պատմությունն արտացոլող հուշարձան, ինչը կարող է օգուտ բերել համայնքին՝ խթանելով զբոսաշրջության զարգացմանը և երկարաժամկետ կտրվածքով աշխատատեղերի ստեղծմանը: Քննարկման ընթացքում հարց բարձրացվեց նաև ուսումնասիրվող տարածքի հարևանությամբ բնության հուշարձանի առկայության վերաբերյալ: Նշվածի հետ կապված հայտում ներկայացվել է լրացուցիչ հիմնավորում, համաձայն որի՝ Ծովագյուղ-Շորժա ավտոճանապարհի ձախակողմյան մասում՝ անմիջապես հարևանությամբ գտնվում է ջրային էրոզիայի արդյունքում ձևավորված «Շորժա քարացած ալիք» «բնական հուշարձանը», որը ներառված չէ ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ հաստատված ցանկում և չունի բնության հուշարձանի կարգավիճակ /համաձայն՝ ՀՀ կառավարության 18 հունվարի 2007թ Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի մասին թիվ 205-Ն որոշման հավելվածի քարտեզ 15-ի: Համաձայն հայտի տեղեկատվության՝ Արևասարի գաբրոների երևակման տարածքում հաշվառված չեն նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող ուսումնասիրության աշխատանքները չեն ունենա բացասական ազդեցություններ՝ շրջակա միջավայրի բաղադրիչների, Սևանա լճի և «Սևան» ազգային պարկի էկոհամակարգի վրա, քանի որ երկրաբանական ուսումնասիրությա ծրագրով նախատեսված աշխատանքները փոքրածավալ են և կարճատև, ոչ զգալի ազդեցությամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Քանի որ հանքերևակման տարածքը գտնվում է Սևանա լճի հարևանությամբ և անմիջական ազդեցության գոտու տարածքում, աշխատանքներն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 20-րդ և «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի և 10-րդ հոդվածի պահանջներով /10-րդ հոդվածի 2-րդ կետի, գ) ենթակետի **համաձայն** անմիջական ազդեցության գոտում արգելվում է հանքանյութի վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը/, ինչպես նաև 2010թ. հունվարի 29-ի N71-Ն և N72-Ն <<ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին>>, 2014թ-ի հուլիսի 31-ի N781-Ն ՀՀ կառավարության որոշումների պահանջներով
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018թ. N 191–Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների /հողային ծածկույթ, մթնոլորտային օդ, մակերևութային և ստորերկրյա ջրեր, բուսական ծածկույթ և կենդանական աշխարհ/ մշտադիտարկումներ և արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

3. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԳՐԻՆ Ս» ՍՊԸ կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Արևասարի գաբրոների երևակման տեղամասում 2020-2022թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ Գ. Գևորգյան

Գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան